ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը՝
Զինավարդ Պապյան, մակրոտնտեսական քաղաքականության վարչության իրական հատվածի կանխատեսումների և վերլուծությունների բաժնի մասնագետ

2. Գործուղման վայրը և ժամկետները՝ Ավստրիայի Հանրապետություն, ք. Վիեննա, 2024թ. փետրվարի 19-ից մարտի 1-ը ներառյալ:

3. Հրավիրող կողմը՝ Արժույթի միջազգային հիմնադրամ

4. Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)՝

Գործուղման նպատակն էր մասնակցել նշյալ դասընթացին, որը ներկայացնում էր Nowcasting-ի մոդելային գործիքակազմի միջոցով կարճաժամկետ կանխատեսումների իրականացման գործընթացը: Դասընթացը ներառում էր Bridge, Midas, U-Midas, Ridge, Lasso, Elastic net, Factor model, Three Pass Regression Filter, Dynamic Factor model, Mixed Frequency VAR մոդելների խորքային ներկայացումը և վերջիններիս միջոցով կարճաժամկետ կանխատեսումների իրականացման գործընթացի գործնական հմտությունների ձևավորումը:

Ընդհանուր առմամբ, դասընթացն ուներ համապարփակ բնույթ և ընդգրկում էր մակրոնտեսական վերլուծությունների և դրանց հիման վրա ախտորոշման ընդհանրական նկարագրեր՝ արժևորելով վերջիններիս կիրառական նշանակությունը:

5. Քննարկված թեմաները՝

1. Օգտակար վիճակագրական ընթացակարգեր Nowcasting-ի համար՝
   a. Ժամանակային շարքերի վերլուծություն
   b. Սեզոնային ճշգրտում
   c. Leading ցուցանիշներ
2. Nowcasting-ի ստանդարտ մեթոդներ
3. Գործոնային մոդելներ
4. Մեքենայական ուսուցման դերը Nowcasting-ի գործընթացում

6. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը՝

Դասընթացում ընդգրկված թեմաների շրջանակներում իրականացվել են գործնական աշխատանքներ՝ տեսական գիտելիքների պրակտիկ կիրառման նպատակով: Իրականացվել են նաև տարբեր խմբային աշխատանքներ, ուսումնական խմբային խաղեր, պատրաստվել շնորհանդեսներ, որոնք ներկայացվել և քննարկվել են դասընթացի

մասնակիցների հետ: Միաժամանակ շնորհանդեսի միջոցով դասընթացի մասնակիցներին և դասընթացավարներին ներկայացվել են դասընթացն ամփոփող և խմբի կողմից կատարված գործնական աշխատանքների, քննարկումների արդյունքները: Մասնավորապես, կատարվել է և ներկայացվել է Վրաստանի ՀՆԱ-ի կանխատեսումը 2023 թվականի չորրորդ եռամսյակի համար:

7. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը՝

Այդպիսիք առկա չեն:

8. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

Այդպիսիք առկա չեն:

9. Ստորագրությունը, ամսաթիվը:

Մակրոտնտեսական քաղաքականության վարչության
իրական հատվածի կանխատեսումների և
վերլուծությունների բաժնի մասնագետ
Զինավարդ Պապյան

_____
(Ստորագրություն)

12 մարտ, 2024թ.